Բայդենը պատրաստվո՞ւմ է մեծ պատերազմի

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 02.02.2024թ.

2024 թ. հունվարի 28-ին Սիրիա-Հորդանան սահմանին գտնվող ամերիկյան բազայի վրա անհայտ ԱԹՍ-ի հարձակումից հետո միջազգային հանրությունը քարացել է՝ անհանգստությամբ սպասելով ԱՄՆ-ի պատասխան քայլերին, որոնք կարող են Իրանի դեմ համապարփակ պատերազմի խթան դառնալ: Պաշտոնական Վաշինգտոնը, առանց վարանելու, անմիջապես մեղադրեց Թեհրանին՝ իր կամակատարների միջոցով այս հարձակումը կազմակերպելու մեջ, և հայտարարեց պատասխանի անխուսափելիության մասին:

Վերջին մի քանի օրերի ընթացքում ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենն արդեն մի քանի անգամ խոսել է Պենտագոնի առջև դրված «*պատասխան գործողություն*» մշակելու առաջադրանքի մասին: Պետքարտուղար Է. Բլինկենը, իր հերթին, նույնպես հաստատել է Սպիտակ տան վճռականությունը՝ արձագանքելու «*իրանական սադրանքին*», սակայն ընդգծել է, որ ԱՄՆ-ի պատասխանը կարող է լինել «*բազմաստիճան, տեղի ունենալ փուլերով և լինել տևական*»: ԱՄՆ-ի ռազմական գերատեսչության ներկայացուցիչներն ավելի սակավախոս են, ինչը հասկանալի է: Հունվարի 30-ին ամերիկյան հեղինակավոր *Politico* հանդեսը, վկայակոչելով իր աղբյուրները, հայտնել է, որ Պենտագոնը դիտարկում է Իրանի դեմ «*պատասխան հարվածի*» մի քանի տարբերակներ: Խոսքը, մասնավորապես, Սիրիայում կամ Իրաքում իրանցի զինվորականների կուտակումների վրա հարձակման, կամ էլ՝ Պարսից ծոցի շրջանում կենտրոնացած իրանական նավատորմի վրա զանգվածային հարված հասցնելու մասին է:

Բոլոր դեպքերում, Թեհրանը, համոզվելով, որ Վաշինգտոնը չի հավատում իր հավաստիացումներին, թե՝ ինքը մասնակից չէ ամերիկյան բազայում տեղի ունեցած պայթյունին, անմիջապես իր զինված ուժերը բերել է մարտական բարձր պատրաստության վիճակի, իսկ ՀՕՊ-ի համակարգերը՝ առավելագույն մարտական պատրաստության:

Տագնապալի սպասման այս ֆոնին շատ ամերիկացի վերլուծաբաններ հակված են կարծելու, որ ամերիկյան բանակի լայնածավալ գործողությունը ձեռնտու չէ Ջ. Բայդենի և նրա թիմի համար՝ ԱՄՆ-ում ծավալվող դրամատիկ նախընտրական մրցավազքի և Դաշնության մայրաքաղաքի դեմ առանձին նահանգների դեմարշի լույսի ներքո՝ «Տեխասի ճգնաժամի» համատեքստում: Ենթադրվում է, որ դա կարող է ամբողջությամբ ոչնչացնել հաջորդ քառամյա նախագահական ժամկետում իշխանությունը պահպանելու դեմոկրատների հնարավորությունները, քանի որ արդեն իսկ նյարդայնացած ամերիկյան հասարակությունը կարող է դժգոհությամբ պատասխանել Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի հերթական ռազմարշավին:

Ըստ վերլուծաբանների՝ Բայդենի թիմը քաջատեղյակ է, նաև կասկածում է, որ տեղի ունեցածը դավադրություն է ամերիկյան բազայի նկատմամբ՝ միտված երկիրը

կանգնեցնելու երկընտրանքի առջև՝ կոշտ պատասխան տալ և առերեսվել ընտրողների դժգոհությանը, կամ էլ՝ ձևացնել, թե Մերձավոր Արևելքում ամերիկացի զինծառայողների մահը սովորական բան է, և հայտնվել «*Կապիտոլիումի բազեների*» և չարախնդող Դ. Թրամփի քննադատությունների տարափի տակ:

Սակայն, մյուս կողմից, Սպիտակ տան մի շարք գործողություններ հակասում են իրավիճակի վերը նշված գնահատականին և կարող են ցույց տալ հենց իշխող թիմի շահագրգռվածությունը Մերձավոր Արևելքում նոր պատերազմի մեջ: Մասնավորապես, դրա մասին է վկայում Վաշինգտոնի անմիջական արձագանքը, որը Թեհրանին մեղադրում է ամերիկյան բազայի վրա հարձակվելու մեջ՝ առանց հետաքննության կամ հետախուզական տվյալների ուսումնասիրության: Մինչդեռ, եթե նրանք չցանկանային հայտնվել «լարած ծուղակի» մեջ, ապա Բայդենը և նրա թիմը չէին շտապի մեղադրել Իրանին, այլ՝ ժամանակ կհատկացնեին միջադեպը հետաքննելու համար, այնուհետև՝ կսահմանափակվեին տեղական պատժիչ գործողություններով այն խմբերի դեմ, ովքեր իրականացրել էին հարձակումը:

Այս առումով արժե ուշադրություն դարձնել դիտորդների կողմից բաց թողնված մեկ կարևոր հանգամանքի վրա: Բանն այն է, որ միջադեպի պահից ի վեր Սպիտակ տունը և դրան մոտ կանգնած լրատվամիջոցները պնդում էին, որ հարձակման է ենթարկվել Հորդանանում ամերիկյան բազան, մինչդեռ, ըստ մերձավորարևելյան աղբյուրների, այդ թվում, հենց, Հորդանանի, խոսքը Սիրիայում՝ հորդանանյան սահմանին մոտ գտնվող Էտ-Թանֆ բազայի մասին էր, և այս վարկածն ավելի հավանական է թվում:

Առաջին հայացքից էական ոչինչ չկա տեղորոշման նման տարբերությունների մեջ: Սակայն իրականում խոսքը սկզբունքային տարբերության մասին է: Միջազգային իրավունքի տեսանկյունից Միացյալ Նահանգներն իրավունք ունի թշնամիների նկատմամբ անհամաչափ պատասխանի դիմելու, եթե նրանք հարձակվեն ամերիկյան բազայի վրա, որն, այս դեպքում, տեղակայված է Հորդանանի տարածքում՝ Ամմանի հետ երկկողմ համաձայնագրերի հիման վրա, միջազգային իրավունքին լիովին համապատասխան: Սիրիայում ամերիկյան բազաները տեղակայված են ԱՄՆ-ի ներքին օրենքների, այլ ոչ թե միջազգային և, հատկապես, սիրիական օրենքների հիման վրա, և, հետևաբար, ռազմական գործողությունների լեգիտիմացումը՝ բազաները պաշտպանելու կամ ի պատասխան դրանց վրա հարձակման ի սկզբանե անհնար է:

Այսպիսով, հարձակման ենթարկված բազայի գտնվելու վայրի մասին տեղեկատվության խեղաթյուրումը կարող է ևս մեկ անգամ ցույց տալ, որ Բայդենի թիմի՝ Մերձավոր Արևելքում իրենց երկրի դեմ սանձազերծված մեծ պատերազմից խուսափելու ցանկության մասին վարկածը առնվազն հակասական է: Կարելի է նաև ենթադրել, որ հենց նման պատերազմում դեմոկրատները հնարավորություն են տեսնում՝ ա) շեղել ամերիկյան հասարակության ուշադրությունը *«Տեխասի ճգնաժամից»*, որը սպառնում է երկրին վերջնական քաղաքական պառակտմամբ, և բ) Թրամփի վարկանիշերից խլել հայրենասեր ընտրազանգվածի ձայները: